



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ԳՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՔՈԼԵԶ

ՀՊՏՀ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՔՈԼԵԶԻ ՈւՍԱՆՈՂՆԵՐԻ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ (ՊՐԱԿՏԻԿԱՅԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

- ✓ Արտադրական պրակտիկան ուսումնական գործունեության տեսակ է՝ ուղղված ուսումնառության ընթացքում ուսանողի ձեռք բերած տեսական և գործնական գիտելիքների ամրապնդմանն ու զարգացմանը, մասնագիտության կրթական ծրագրերում նշված անհրաժեշտ գործնական հմտությունների և կարողությունների ձեռք բերմանը:
- ✓ ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջի արտադրական պրակտիկան կազմակերպվում է ըստ մասնագիտությունների՝ ուսումնական պլանով հաստատված մասնագիտության մոդուլների համար սահմանված տևողությանը և ժամկետներին համապատասխան (Հավելված 1.):
- ✓ Արտադրական պրակտիկան անց է կացվում ՀՀ կազմակերպություններում և ընկերություններում:
- ✓ Ուսանողները արտադրական պրակտիկան կարող են անց կացնել ինչպես իրենց կողմից ընտրված կազմակերպություններում, այպես էլ քոլեջի կողմից առաջարկվող կազմակերպություններում:
- ✓ Իրենց կողմից ընտրված կազմակերպությունում պրակտիկան անց կացնելու դեպքում՝ ուսանողը պետք է պրակտիկան սկսվելուց ոչ ուշ, քան 1 ամիս առաջ քոլեջի ղեկավարությանը ներկայացնի տվյալ կազմակերպության ղեկավարի կողմից հաստատված հայտը, (Հավելված 2.): Պրակտիկան ինքնուրույն ամրագրելու դեպքում՝ քոլեջի և կազմակերպության միջև պայմանագիր չի կնքվում:
 - * Հայտը անհրաժեշտ է ներկայացնել կազմակերպության պաշտոնական ձևանմուշի (բլանկի) վրա:
 - ** Հայտի նմուշը կարող եք ներբեռնել [կայքից](#):
- ✓ Ըստ մասնագիտությունների հայտ ներկայացնելու վերջնաժամկետներն են.
 - «Ֆինանսներ» մասնագիտություն՝ 15.03.2019 թ.
 - «Բանկային գործ» մասնագիտություն՝ 25.03.2019 թ.
 - «Մենեջմենթ» մասնագիտություն՝ 29.03.2019 թ.
 - «Հաշվապահական հաշվառում» մասնագիտություն՝ 08.04.2019 թ.
 - «Ապահովագրական գործ» մասնագիտություն՝ 12.04.2019 թ.
- ✓ Համապատասխան մասնագիտության ամբիոնի կողմից յուրաքանչյուր ուսանողին կցվում է պրակտիկայի ղեկավար՝ սահմանված պարտադիր մոդուլների դասախոսները (Հավելված 1.):
- ✓ Պրակտիկայի ղեկավարի գործառույթներն են.

- համակարգել պրակտիկայի անցկացման գործընթացը տվյալ կազմակերպությունում և հետևել պրակտիկայի ընթացքին
- իրականացնել պրակտիկայի արդյունքների գնահատում՝ պրակտիկայի օրագրի և հաշվետվության պահանջներին համապատասխան
- ✓ Պրակտիկան սկսելուց առաջ ուսանողին տրամադրվում է պրակտիկայի գործուղման ուղեգիր (Հավելված 3.).
 - քոլեջի կողմից կազմակերպված պրակտիկայի դեպքում՝ պրակտիկան իրականացնող կազմակերպության և քոլեջի միջև կնքված պայմանագրի հիման վրա,
 - ուսանողի ընտրությամբ պրակտիկայի ինքնուրույն ամրագրման դեպքում՝ համապատասխան հայտի հիման վրա:
- ✓ Բոլոր ուսանողներին տրամադրվում է պրակտիկայի ծրագիր և օրագիր (Հավելված 4.):
- ✓ Պրակտիկայի ընթացքում ուսանողը պարտավոր է վարել օրագիրը լրացման կարգին համապատասխան, որը պետք է բխի պրակտիկայի ծրագրից:
- ✓ Ուսանողը պարտավոր է շաբաթը մեկ անգամ հանդիպել իր ղեկավարի հետ՝ քննարկելու պրակտիկայի ընթացքը և ներկայացնելով օրագիրը՝ անհրաժեշտ նշումներով և համապատասխան լրացումներով:
- ✓ Ժամանակացույցով սահմանված պրակտիկայի ավարտից հետո, պետական քննություններից առաջ, 2 օրվա ընթացքում, ուսանողը իր ղեկավարին է ներկայացնում.
 - օրագիրը՝ պրակտիկայի ընթացքի, կատարած աշխատանքների բնութագրով, պրակտիկան իրականացնող կազմակերպության կողմից նշանակված ղեկավարի կողմից ստորագրությամբ (Հավելված 4.2.):
 - հաշվետվությունը՝ ձևակերպված քոլեջի պրակտիկայի ղեկավարի կողմից ներկայացվող պահանջներին և ձևաչափին համապատասխան.
 - * Բոլոր մոդուլները ներկայացվում են մեկ հաշվետվությունում, իրարից առանձին ենթաբաժիններով: Հաշվետվության ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի 12 էջը:
- ✓ Արտադրական պրակտիկայի արդյունքում ուսանողը գնահատվում է 10-բալային գնահատման համակարգին համապատասխան:

Պրակտիկայի կազմակերպչական հարցերով դիմեք՝ ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջի Մասնագիտական զարգացման կենտրոն՝ Կարինե Կամոնային (էլ. փոստ՝ careercenter.college@gmail.com)

Արտադրական պրակտիկա (2018-2019 ուստարվա II կիսամյակ)

«**Հաշվապահական հաշվառում**» մասնագիտության III կուրսերի 2018-2019 ուստարվա II կիսամյակի արտադրական պրակտիկան կկազմակերպվի **08.05.2019թ-19.06.2019 թ.** ընկած ժամանակահատվածում հետևալ մոդուլներից

| | | |
|----|---|-----|
| 1. | Հիմնական միջոցների հաշվառում (Ա. Ավետիսյան) | 20ժ |
| 2. | Սեփական կապիտալ: Եկամուտների և ծախսերի հաշվառում (Ա. Ավետիսյան) | 20ժ |
| 3. | Հաշվապահական հաշվառման կազմակերպման և վարման ընթացակարգերը (ՅԱ - Ա. Ավետիսյան, ՅԲ - Լ. Մուրադյան) | 20ժ |

«**Բանկային գործ**» մասնագիտության III կուրսերի 2018-2019 ուստարվա II կիսամյակի արտադրական պրակտիկան կկազմակերպվի **25.04.2019թ-18.06.2019թ.** ընկած ժամանակահատվածում հետևալ մոդուլներից

| | | |
|----|---|-----|
| 1. | Հաշվապահական հաշվառումը բանկերում, բանկային, դրամարկղային գործառնություններ (Լ. Օսիպյան, Յ. Ղարիբյան) | 40ժ |
| 2. | Ավանդային և վարկային գործառնություններ (Է. Տանանյան) | 20ժ |
| 3. | Վճարահաշվարկային համակարգեր (Լ. Օսիպյան) | 20ժ |

«**Ֆինանս**» մասնագիտության III կուրսերի 2018-2019 ուստարվա II կիսամյակի արտադրական պրակտիկան կկազմակերպվի **17.04.2019թ-17.06.2019 թ.** ընկած ժամանակահատվածում հետևալ մոդուլներից

| | | |
|----|--|-----|
| 1. | Ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ (Ա. Մաշինյան) | 33ժ |
| 2. | Համայնքային ֆինանսներ (Ա. Ավետիսյան) | 33ժ |
| 3. | Կազմակերպությունների ֆինանսներ (Ա. Ավետիսյան) | 33ժ |

«**Ապահովագրական գործ**» մասնագիտության III կուրսերի 2018-2019 ուստարվա II կիսամյակի արտադրական պրակտիկան կկազմակերպվի **13.05.2019 թ.-10.06.2019 թ.** ընկած ժամանակահատվածում հետևալ մոդուլներից

| | | |
|----|--|-----|
| 1. | Ապահովագրական գործ, ապահովագրության տեսակները և դասերը (Գ. Պետրոսյան, Չ. Հովհաննիսյան) | 32ժ |
| 2. | Հաշվապահական հաշվառումը ապահովագրական ընկերություններում (Ա. Մուրադյան) | 16ժ |

«**Մենեջմենթ**» մասնագիտության III կուրսի 2018-2019 ուստարվա II կիսամյակի արտադրական պրակտիկան կկազմակերպվի **29.04.2019թ-03.06.2019 թ.** ընկած ժամանակահատվածում հետևալ մոդուլներից

| | | |
|----|--|-----|
| 1. | Վաճառքի պլանավորման և առևտրի գործունեության կազմակերպում (Լ. Ղազարյան) | 32ժ |
| 2. | Գործակցության կազմակերպումը ստորաբաժանումներում (Ք. Հայրապետյան) | 16ժ |

ՀԱՅՏ

արտադրական պրակտիկայի կազմակերպման

ՀՊՏՀ ֆինանսնապահովման քոլեջի
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Նազելի Նավասարդյանին

_____ ի դեմս _____
(ընկերության անվանում) (ընկերության ղեկավարի անուն, ազգանուն)

համաձայն է արտադրական պրակտիկայի անցկացման համար ընդունել
_____ մասնագիտության միջին

(մասնագիտության անվանում)
մասնագիտական կրթական ծրագրով սովորող _____ կուրսի ուսանող
_____ ին:

(ուսանողի անուն, հայրանուն, ազգանուն)

Մեր ընկերության կողմից պրակտիկայի ղեկավար է նշանակվում

(պաշտոն, անուն, հայրանուն, ազգանուն)

Կազմակերպության ղեկավար՝ _____ :
(անուն, ազգանուն)

(ստորագրություն) Կ.Տ.

«__» _____ 2019թ.

Խնդրում եմ Ձեր թույլատվությունը, ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջի «_____» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող(ուհի) _____ին քոլեջի 2018-2019 թթ. ուսումնական պլանով նախատեսված _____-ից մինչև _____-ը, Ձեր ղեկավարած կազմակերպությունում իրականացնելու արտադրական պրակտիկան (փորձառություն):

Խնդրում եմ Ձեր աջակցությունը _____ին՝ պրայտիկայի ընթացքում հնարավորինս նպաստելու նրա մասնագիտական հմտությունների և կարողությունների ձևավորմանը:

Ուսանողը պրակտիկայի ընթացքում պետք է.

- վարի պրակտիկայի ծրագրին համապատասխան փորձառության օրագիր, որը կհաստատվի կազմակերպությունում ղեկավարի կողմից,
- կազմի պրակտիկայի հաշվետվություն՝ քոլեջի կողմից տրամադրված ծրագրին համապատասխան:

Պրակտիկայի ավարտին անհրաժեշտ է ուսանողին տալ համապատասխան բնութագիր՝ ընկերության կողմից ուսանողին կցված պրակտիկայի ղեկավարի ստորագրությամբ ու ընկերության կնիքով:

Կանխավ շնորհակալություն՝

Տնօրենի Ժ/պ

Ն.Նավասարդյան



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՕՐԱԳԻՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ -----

ԿՈՒՐՍ -----

ՈՒՍԱՆՈՂ -----

(Ազգանուն, անուն, հայրանուն)

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՄԿԻՋԲԸ -----

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ -----

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

| Ամիս, ամսաթիվ | Փորձառության վայրը | Կատարվող աշխատանքների բովանդակությունը |
|---------------|--------------------|--|
| | | |

| համառոտ | Փորձառության վայրից նշանակված ղեկավարի ստորագրությունը | Ղեկավարի ստորագրությունը |
|---------|--|--------------------------|
| | | |

ՈՒՍԱՆՈՂԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՅՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԻ ԿԱՏԱՐԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ՝
ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ

ՈՒՍԱՆՈՂԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՂԵԿԱՎԱՐԻ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (հաստատված կնիքով)

